Արձանագրություն N 4

«ՀՀ Կոտայքի մարզի Քարաշամբի նոր թաղամասի ջրագծի անցկացման» աշխատանքների թիվ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

«4» «մարտի» 2019թ.
ժամը՝ 16:00

Հանձնաժողովի նախագահ
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) — Սամվել Առաքելյան

անդամներ՝

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Համազասպ Մարտիրոսյան
2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Էդուարդ Ջանջուղազյան
3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Արթուր Սողոմոնյան
4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Արեգ Եղիյան
5.Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) — Ալվարդ Հարությունյան

1. ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հրավերի պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Ս.Առաքելյան)

1.1 ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81 ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերի պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստը անցկացվել է 2019 թվականի մարտի 4-ին, ՀՏՁՀ գրասենյակի շենքում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Ուլնեցի 31., 4-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81 ծածկագրով ՀՀ ՖՆ պահանջվող էլեկտրոնային հասցեներին ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ ՊԵԿ հարցում ներկայացնելու և ՀՀ ՊԵԿ եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ

(Ս.Առաքելյան)

2.1 ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81 ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ ՖՆ պահանջվող էլեկտրոնային հասցեներին և ներկայացվել է ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81 ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին պահանջվող տեղեկատվությունը: ՊԵԿ եզրակացությունը ստացվել է «ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած տեղեկատվությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող: «ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարը կազմում է 121,857 ՀՀ դրամ, որից եկամտային հարկը՝ 43,857 ՀՀ դրամ և դրոշմանիշային վճարը՝ 78,000: Նիստը կասեցվել էր մինչև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձից որոշում ստանալը:

Հանձնաժողովն արձանագրեց, որ «ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 18.02.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/22 բողոքը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բավարարվել է՝ հիմք ընդունելով «ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պահանջվող փաստաթղթերը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով 2019թ. մարտի 3-ին: «ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 18.02.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/22 բողոքի որոշումը տեղադրված է նաև www.gnumner.am համացանցային կայքում:

«ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից շտկվել է անհամապատասխանությունը՝ մարելով իր բոլոր հարկային պարտավորությունները և ներկայացնելով բողոք ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, որը պարզաբանել է, որ դրոշմանիշային վճարը չի կարող համարվել հարակային պարտավորություն, ուստի անհիմն է «ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու հնարավորությունից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝

(Ս.Առաքելյան)

3.1 «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81» ծածկագրով մրցույթի «ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնել:

3.2 Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 2019 թվականի հունվարի 25-ի թիվ 01.1/27-1/1533-19 գրության՝ «ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և վերջինիս ճանաչել «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81» ծածկագրով մրցույթի հաղթող:

3.3 «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին առաջարկել անգործության ժամկետի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

3.4 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝ հանձնաժողովի.

Հանձնաժողովի նախագահ

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) — Սամվել Առաքելյան

անդամներ՝

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Համազասպ Մարտիրոսյան

2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Էդուարդ Ջանջուղազյան

3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Արթուր Սողոմոնյան

4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Արեգ Եղիյան

5.Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) — Ալվարդ Հարությունյան